## ՁԵՉՆԻԱ

*Հյուսիսային Կովկասի այս ինքնավար հանրապետության տարածքում հին հայկական հուշարձաններ չեն պահպանվել. եղածները հուշակոթողային փոքրածավալ կերտվածքներ են, որոնք թվագրված են 19-րդ դարով: Պրակում զետեղել ենք մի քանի նմուշներ Շելկովսկայա ստանիցայի երբեմնի հայկական գերեզմանոցից, որն այսօր ծածկված է անտառային խիտ բուսականությամբ:*

## ՇԵԼԿՈՎՍԿԱՅԱ (ՇԵԼԿՈԶԱՎՈԴՍԿԱՅԱ) ՍՏԱՆԻՑԱ

*Այս ընդարձակ բնակավայրի շրջակայքում՝ Թերեք գետի ափին, գանվելիս են եղել ռուսահայ խոշոր արդյունաբերողներ Խաստատյանների և Գալստյանների ընդարձակ ալիրությունները, որոնք նրանց շնորհվել են Եկատերինա Ա կայսրուհու 1726 թ. մայիսի 20-ի հրամանագրով[1]: Խաստատյանների մետաքսի գործարանը գտնվելիս է եղել Շելկոզավոդսկայա բնակավայրում, որն այժմ կրում է Շելկովսկայա անունը: Հայկական գերեզմանոցի շրջակայքը, ըստ հայրենագետ Նիկոլայ Միխայլովիչ Երյոմինի՝ կոչվել է Սարապաննիկովա կամ Ջեմնոյ Ռայ (երկրային դրախտ), որտեղ Մ. Բժշկյանի այցելության ժամանակ ապրել են 60 տուն հայեր[2]: 1988 թ. օգոստոսի 23-ին մենք եղանք Շելկովսկայա ստանիցայում և մեկնեցինք Սարապաննիկովա (ըստ Մ. Բժշկյանի՝ Սարափան): Թերեք գետից փոքր-ինչ հեռու, անտառում հայտնաբերվեցին կիսակործան հայկական գերեզմանոցի հետևյալ տապանաքարերը.*

*708.* Տապանաքար, *կրաքարից, գլխամասում՝ խաչ և տասմնավոր նախշեր. տարբ՝ 9 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՀԱՇՏԱՐԽԱ/ՆՑԻ ԲԱՍԼԻ ՈՐԴ/Ի ՍԱՐԱՓԱՆ/ ՊՍԱԿԵԱԼ ՈՂ/ՈՐՄԱԾ ՀՈԳԻ/ ...ՓԱՐԻ/ ... ՏԵՄԲԵՐԻ 10-ՈՒՄՆ:

Ծանոթ. *1. Երրորդ տողում Բասլի բառը կարելի է վերծանել նաև Բարսղի:*

*2. Փարի եղծված անունը կարելի է վերականգնել Սափարի:*

*3. Արձանագրությունը թվագրում ենք 18-19-րդ դարերով:*

709. Տապանաքար, *նախորդից շուրջ 5 մ հեռավորությամբ, փոսի մեջ ընկած, կողքին՝ 3 տող.* ԱՅՍ Է ՏԱՊԱ/Ն ՏՐ ԻՍԱԻ Թ[Ա]Մ[Ա]Մ ԽԱԹ[ՈՒՆԻ]. ՌՊԴ (1804):

Ծանոթ. *Երկրորդ անձնանվան ընթերցումը թեական է:*

Լուսանկ. 216

*710.* Տապանաքար, *կրաքարից, անդաշարժված. մի կողին՝ 3 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՅՈՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԵ[Ա]Ն/ ԴԱՐԻԲԵ[Ա]Ն8. ԾՆԴ. 1849 ԱՄԻ, Վ.[Ա.]Խճ. 1880 ԱՄԻ:

Լուսանկ. 217

*711.* Տապանաքար, *կրաքարից, ուղղանկյունաձև, նախորդից 6 մ հեռու. մի կողին՝ 3 տող.*

Ի ՆԵՐՔՈ ՎԻՄԻՍ ՀԱՆ/ԳՉԻՆ ՈՍԿԵՐՔ ՄՈԶԴՈԿԵ [8Ի] ... ԱԲՐԱՀՄՈՒ

*Մյուսին՝*

ՅԱԿՈՎԲԵԱՆ ՋԵՐՔԵՋ/ԵԱՆ8. ԾՆ./ 13 ՈՒ[ՆԻՍԻ*] 1829 Թ[ՎԻՆ]. ՎԱԽՃ. 1882 Թ[ՎԻՆ]. ՓԵՏ[ՐՎԱՐԻ] 12-ին:

Լուսանկ. 218

---

1 Свод законов и указов, 1726, с. 651-652, № 4887.

2 Մ. Բժշկյան, էջ 403-404, 405-406: